ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## 2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-նոյեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 105.2%, 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 92.6%, իսկ 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.4%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2 տրլ 105 մլրդ 103.8 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 273 մլրդ 0.7 մլն. և 249 մլրդ 16.8 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 365 մլրդ 756.1 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 43 մլրդ 320.6 մլն և 20 մլրդ 979.9 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2 տրիլիոն 996 մլրդ 300.2 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 478 մլրդ 572.8 մլն և 133 մլրդ 0.9 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1 տրլ 692 մլրդ 573.5 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 143 մլրդ 829.5 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 154 մլրդ 991.3 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 102.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.8%-ի և 109.3%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 106.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 88.8%-ի և 104.5%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 107.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.5%-ի և 109.2%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 107.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.4%-ի և 114.8%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 538 մլրդ 267.8 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 175 մլրդ 108.2 մլն և 214 մլրդ 809.6 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 1 տրիլիոն 297 մլրդ 798.9 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 80 մլրդ 196.1 և 16 մլրդ 486.4 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 247 մլրդ 859.3 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 16 մլրդ 289.7 մլն և 19 մլրդ 660.1 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 21 մլրդ 177.8 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1 մլրդ 406.7 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1 մլրդ 939.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 99.6%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.7%-ի և 123.9%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 102.6%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.6%-ի և 108.2%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 108.0%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.4%-ի և 99.1%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 106.9%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 85.6%-ի և 97.9%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ
Տեղեկատվություն և կապ
Ֆինանսական և ապահովագրական գործունեություն




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ
Ժամանակաշրջանի վերջին ամիսը նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ




Աշխատանք փնտրողներ, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ
Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը, ընդամենը ժամանակաշրջանի վերջին ամսվա դրությամբ, մարդ




Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 212 մլրդ 227.4 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 113 մլրդ 454.2 մլն և 223 մլրդ 838.4 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 292 մլրդ 958.5 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 31 մլրդ 107.8 մլն և 49 մլրդ 880.3 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 429 մլրդ 291.8 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7 մլրդ 749.3 մլն և 33 մլրդ 744.1 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 66.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 86.5%-ի և 121.9%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 112.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.2%-ի և 110.4%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 102.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև  2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.0%-ի և 116.3%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-նոյեմբերին 2020թ. հունվար-նոյեմբերի նկատմամբ կազմել է 107.1%, 2020թ. հունվար-նոյեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.0%, 2019թ. հունվար-նոյեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.5%: ՍԳԻ-ն 2021թ. նոյեմբերին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 106.0%, 2020թ. նոյեմբերին 2019թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 100.3%, 2019թ. նոյեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 99.5%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. նոյեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 98 մլրդ 780 մլն դրամ, ինչը 253 մլրդ 737 մլն դրամով կամ 30%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 267 մլրդ 875 մլն դրամով կամ 32.2%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 86890 մարդ, ինչը 1472 մարդով կամ 1.7%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 2141 մարդով կամ 2.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. նոյեմբերի դրությամբ կազմել է 58132 մարդ, ինչը 2706 մարդով կամ 4.4%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 3954 մարդով կամ 6.4%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

## ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




## ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




## Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




## Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիկ գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 7 մլրդ 418.4 մլն դոլար, ինչը 1 մլրդ 55.5 մլն դոլարով կամ 16.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 164.3 մլն դոլարով կամ 2.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է -1 մլրդ 995.9 մլն. դոլար, ինչը 176.4 մլն դոլարով կամ 9.7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 437.6 մլն դոլարով կամ 18%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 2 մլրդ 711.3 մլն դոլար, ինչը 439.6 մլն. դոլարով կամ 19.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 300.9 մլն դոլարով կամ 12.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-նոյեմբերին կազմել է 4 մլրդ 707.1 մլն դոլար, ինչը 615.9 մլն դոլարով կամ 15.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 136.6 մլն դոլարով կամ 2.8%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-նոյեմբերին նախնական գնահատմամբ կազմել է 199156 դրամ, ինչը 12989 դրամով կամ 7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 20494 դրամով կամ 11.5%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 222 մլրդ 387 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը` 15 մլրդ 824.6 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը` 206 մլրդ 562.4 մլն դրամ: 2020թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 242 մլրդ 709 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 274 մլրդ 2.9 մլն դրամ և -31 մլրդ 293.9 մլն դրամ: 2019թ. հունվար-նոյեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 40 մլրդ 154.1 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -3 մլրդ 239.4 մլն դրամ և -36 մլրդ 914.7 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ